

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

**ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է համայնքի ղեկավար՝ Աշոտ Գալստյանը
Հաստատվել է համայնքի ավագանու 27.12. 2016թ. թիվ 32-Ն որոշմամբ

2016թ. գ. Աղավնաձոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ռզոնայնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական խառնուրդներ	8
2.5. Ջրագացման խոչընդոտներ և դժվարություններ	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	10
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	10
3.1. Համայնքի զարգացման տեսլական	10
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում	10-13
4. ՀԶԾ ֆինանսավորում	13
5. ՀԶԾ մոնիթորինգ	14

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Վայոց Ձոր մարզի Աղավնաձոր համայնքը գտնվում է Երևան-Մեղրի ավտոմայրուղու 120-րդ կմ-ի հյուսիսային մասում 6կմ հեռավորության , ծովի մակարդակից 1400-1600մ բարձրության վրա : Համայնքը 1828 թվականին գտնվել է ներկայիս գյուղից ավելի հարավ և կոչվել է Քյարվանասարա:

Համայնքը դեռ սովետական տարիներից հայտնի է եղել իրեն բնորոշ քաղցրահամ մրգերով և առավել ևս արենի տեսակի խաղողով, որի արտադրության ծավալները հասել են մոտ 4.0 հազար տոննայի: Արենի տեսակի խաղողը որպես տարածաշրջանային առանձնահատուկ սորտ արտադրվում է Աղավնաձոր համայնքում` 80%-ի սահմաններում:

Այժմ համայնքում ինչպես պտղի , այնպես էլ խաղողի, անասնապահական մթերքների արտադրությունը կտրուկ նվազել են օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Համայնքը վերջին տարիներին գազաֆիկացվել է , ասֆալտապատվել է գյուղ մտնող ճանապարհը, գործում է մանկապարտեզը, արվեստի դպրոցը:

Համայնքի օրակարգային խնդիրներից է մշակույթի տան վերանորոգումը, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը և ջրահեռացման կառուցումը, մանկապարտեզի և արվեստի դպրոցի ջեռուցման խնդրի լուծումը, ոռոգման ջրի ներքին ցանցի արդիականացումը:

Խնդիրներ ,որոնց լուծումը կարելի է իրականություն դարձնել համայնքի բյուջեի կառավարման, դրամաշնորների, դոնոր կազմակերպությունների և տարբեր համատեղ համագործակցության շնորհիվ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագիրը

Աղավնաձոր համայնքը, որը ծովի մակարդակից բարձր է 1400-1600մ բարձրության վրա հիմնադրվել է 1828թ. Պարսկաստանից գաղթած հայ ընտանիքների կողմից: Համայնքի հյուսիսային մասում Ուլգյուր լեռան ստորոտում է գտնվում Մոմիկի կողմից 13-րդ դարում կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին, որտեղ վերջերս հայտնաբերվել են նրա ընտանիքի գերեզմանները, որոնք էլ վկայում են համայնքի ավելի վաղ պատմության մասին:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5045հա , որից 4745.6 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Գյուղատնտեսական հողերի ֆիզիկական և քիմիական կառուցվածքով է պայմանավորված մրգերի և խաղողի բնորոշ համային հատկանիշները:


Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 20կմ հեռավորության վրա: Համայնքի բնակչության հիմնական մասի զբաղմունքը և ապրուստի միջոցը հողագործությունն ու անասնապահությունն է:

Համայնքը իր վարչական տարածքում չունի հանքավայրեր:


Համայնքի բնակչության թիվը 2016թվականի դրությամբ կազմել է 2088 մարդ:

Ստորև ներկայացված են բնակչության տարիքային և բնական աճի սանդղակները

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՌԻՔԱՅԻՆ ՄԱՆՂՂԱԿԸ



Բնակչության բնական աճը /2014-2016թթ./




Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց երկու մասնաշենքով, մանկապարտեզ, որը տարվա մեջ աշխատում է վեց ամիս որտեղ հաճախում են 55 երեխա, արվեստի դպրոց, որն ունի 108 աշակերտ:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի տարեկան ընդհանուր բյուջեն 2016թվականին կազմել է 63283.1հազ. դրամ: 2014-2016թթ համայնքի բյուջեի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան ստորև ներկայացված է աղյուսակով

Աղավաճող համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.



2017թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում է 51746.5հազ. դրամ, որից սեփական եկամուտները 15730.0 հազ դրամ: Համայնքում կա երկու գինու գործարան, մեկը՝ 100տոննա. մյուսը՝ 200 տոննա տարեկան արտադրողականությամբ: Նրանց կողմից արտադրված գինիները հիմնականում սպառվում են Ռուսաստանի Ղաշնությունում:

Համայնքում գործում է 8 մանրածախ առևտրի կետ և գյուղ գործիքների և արտադրական ապարանքների արտադրություն:

Համայնքում գյուղացիական տնտեսություններին պատկանող 292.0հա խաղողի այգիներից ստացված մոտ 3000տոննա խաղողը հիմնականում մթերվում է գինեգործությամբ զբաղվող վերամշակվող կազմակերպությունների կողմից, ինչպես մարզի տարածքում, այնպես էլ մարզից դուրս: Վերջին տարիների համայնքում նվազել է պտղի արտադրանքը:

Պտուղ -բանջարեղենը հիմնականում արտադրվում է ներքին սպառման համար ,իսկ ավել մասը ինչպես Երևան քաղաքում այնպես էլ հարևան մարզերում:

Համայնքի հյուսիսային մասում Ռիզյուր լեռան ստորոտում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է Մոմիկի կողմից 13-րդ դարում , իրենից մեծ պատմամշակութային արժեք է ներկայացնում և նպաստավոր պայմաններ ստեղծում համայնքում զբոսաշրջության զարգացման համար:

Էքստրենալ տուրիզմի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Աղավնաձոր -Շատին լեռնային ճանապարհը:

Տարվա ընթացքում 6-7 ամիս /հիմնականում գարնան և ամռան ամիսներին/աշխատող մանկապարտեզ են հաճախում 60 երեխա, սակայն ջեռուցման և բավարար գույքի առկայության դեպքում այն կարող է աշխատել ամբողջ տարին և ընդունել 100-ից ավելի երեխա:

Համայնքում գործում է նաև առողջության առաջնային պահպանման կենտրոնը/ԱԱՊԿ/,որը սպասարկում է Աղավնաձոր և Արփի համայնքները:

Գործազուրկների թիվը ավելանում է ,որի հետևանքով մեծանում է արտագաղթը:Համայնքը ունի 335 թոշակառուներ, 70 հաշմանադամներ, 38 նպաստառու ընտանիքներ :

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվող ծրագրերի իրականացման համար համայնքը նախատեսում է համագործակցել << կառավարության , անհատ ներդրողների , բարեգործների, տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի ընդհանուր բյուջեի եկամտային մասից նախատեսվում է ցանկացած ծրագրի համար հատկացնել որոշակի գումար` կախված ծրագրի ֆինանսավորման արժեքից :

2016 թվականի ընթացքում համայնքում «Ֆուլեր տնաշինական կենտրոն» -ի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է ոռոգման ծրագիր,որի արդյունքում ոռոգելի է դարձել մոտ 40 հա հողատարածք:

Համայնքը որպես քույր համայնք համագործակցում է ֆրանսիայի Տրետս քաղաքի հետ:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները


Համայնքի ընդհանուր բյուջեն գոյանում է սեփական եկամուտներից և ֆինանսական համահարթեցման նպատակով պետության կողմից տրվող դոտացիաներից :

Սեփական եկամուտները գոյանում են բյուջե վճարվող հողի հարկից ,վարձավճարներից, գույքահարկից և տեղական տուրքերից:

Սեփական եկամուտների աճ վերջին տարիներին արձանագրվել է վարձակալությամբ տրված հողերից և գույքահարկից:Գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվում է սեփական եկամուտների աճ վարձակալությամբ տրվող արոտավայրերի , բնակչության կողմից ձեռք բերվող շարժական և անշարժ գույքի , կոյուղավճարների և աղբահանությունից ստացված վճարների հաշվին:


Ստորև ներկայացվում է համայնքի 2013-2015թթ. սեփական եկամուտների փաստացի տվյալները:

Համայնքի սեփական եկամուտների դինամիկան
2013-2015թթ./հազար դրամ/



2016թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 17146.0 հազար դրամ:
2017թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 15730.0 հազար դրամ:

Աղավաճող համայնքի 2013-2015թթ. եկամուտների և
ծախսերի դինամիկան /հազար դրամ/



2016թվականի ընդհանուր եկամուտների չափը նախատեսվել է 63283.1 հազ. դրամ:
2017թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է 51746.5 հազ. դրամ:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Աղավաճող համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Հողագործությամբ զբաղվողների մեծ մասը բարձր ծախսատարության, ցածր եկամտաբերության և շուկայի բացակայության պատճառով իրենց սեփականաշնորհված հողակտորները ոչ լրիվ չափով են օգտագործում:

Անասնազվխաքանակը համայնքում վերջին երկու տարվա ընթացքում նվազել է մոտ 30%-ով :

Զեռուցման ծախսատար լինելու պատճառով համայնքի մանկապարտեզն աշխատում է տարվա ընթացքում միայն 6-7 ամիս, որն էլ խնդիրներ է առաջացնում աշխատող ծնողների համար:

Համայնքում չկան երիտասարդական և ժամանցային այլ կենտրոններ : Մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում : Տանիքը համայնքի միջոցներով վերանորոգվել է , սակայն ներքին հարդարման և գույքի բացակայության պատճառով այն հնարավոր չէ շահագործել , որի պատճառով անհնար է դառնում միջոցառումների և հանդիպումների կազմակերպումը: Անմխիթար վիճակում են գտնվում ներհամայնքային ճանապարհները:

Ակնկալվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում:

Ելնելով վերը նշված խնդիրներից համայնքում նախատեսվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացնել հետևյալ ծրագրերը`

1. Համայնքի մշակույթի տան վերանորոգում
2. Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում
3. Մանկապարտեզի շենքի գազաֆիկացում
4. Ուլգյուրի սուրբ Աստվածածին եկեղեցի տանող 6կմ ճանապարհի վերանորոգում և զբոսաշրջության զարգացում
5. Մարզադպրոցի / լողավազանի և մարզադաշտի/ վերանորոգում
6. Ոռոգման ներքին ցանցի վերանորոգում

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի , հնարավորությունների և սպառնալիքների

/ՌԻՅՈՒՄ/ վերլուծություն

<p>Ռիսկեր կողմեր</p> <p>1. Գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար բավարար թեսուրսներ</p> <p>2. Բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ</p> <p>3. Գործող փոքր բիզնեսներ</p>	<p>Թույլ կողմեր</p> <p>1. Ընտանիքների սոցիալական վատ վիճակ</p> <p>2. Գործազուրկների մեծ թիվ</p> <p>3. Համայնքի բյուջեի սեփական միջոցների փոքր մաս</p>
<p>Հնարավորություններ</p> <p>1. Գյուղ. մթերքների կտրուկ աճ</p> <p>2. Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի աճ</p>	<p>Վտանգներ</p> <p>1. Համայնքի բնակիչների և ընտանիքների կազմալուծումը</p> <p>2. Բնակչության կրթական և սոցիալական խտրվածության մասնաճանաչում</p>

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ բարեկեցիկ, ապահովված ընտանիքներ, մշակութային և սպորտային ակտիվ կյանքով ապրող բնակիչներ, կրթված և առողջ երիտասարդներ, կանաչապատված տարածքներ , բարեկարգված հասարակական շենքեր և ճանապարհներ:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի , նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի , նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների

ԾՐԱԳԻՐ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ

Համայնքում արդեն 8 տարի է չի գործում խորհրդային տարիներին կառուցված մշակույթի տունը : Շենքը փլուզման վտանգից փրկելու համար համայնքի միջոցներով վերանորոգվել է շենքի տանիքը, սակայն ներքին հարդարման և գույքի

բացակայության պատճառով այն անհնար է շահագործել :

Շենքի վերանորոգման համար անհրաժեշտ է մեծ ֆինանսական միջոցներ : Այն

շահագործելուց հետո նոր թափ կստանա համայնքի մշակութային կյանքը:

Ծրագիրն իրականացնելու համար հարցը բարձրացվել է ՀՀ կառավարության առջև, նախատեսվում է հարցը նորից բարձրացնել : Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 110.0 մլն. ՀՀ դրամ, որն ակնկալվում է ստանալ աջակցության ծրագրով : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2018 թվականների ընթացքում :

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՔԻ ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Չնայած ,որ ամեն տարի համայնքի բյուջեի միջոցներով կատարվում է գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում , այնուամենայնիվ գյուղամիջյան ճանապարհները գտնվում են վատ վիճակում, որը շատ անհարմարություններ է առաջացնում թե բնակիչների և թե դպրոցականների համար: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները զերծ կմնան շատ անհարմարություններից: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 250.0 մլն դրամ , որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի կողմից ներդրումը կկազմի 7.0 մլն դրամ, մնացած 243.0 մլն դրամը ակնկալվում է ստանալ ներդրողներից : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին:

ԾՐԱԳԻՐ 3

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Անհրաժեշտ ջեռուցման բացակայության պատճառով համայնքի մանկապարտեզը տարվա ընթացքում աշխատում է ընդամենը 6ամիս, որի պատճառով շատ աշխատող ծնողների համար անհարմարություններ է ստեղծվում: Ծրագրի իրականացումից հետո կավելանա մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ համաներդրմամբ: Ծրագրի արժեքը կկազմի 5.0 մլն. դրամ, համայնքը կներդնի 2.0 մլն դրամ, մնացած 3.0 մլն գումարը ակնկալվում է դոնոր կազմակերպությունից:

ԾՐԱԳԻՐ 4

ՈՒԼԳՅՈՒՐԻ ՍՐԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Համայնքի զարգացման համար մեծ հնարավորություններ կստեղծի զբոսաշրջությունը: Մեծ հետաքրքրություն է իրենից ներկայացնում մոմիկի կողմից 13-րդ դարում կառուցված Ուլգյուրի եկեղեցին Եկեղեցի տանող ճանապարհի վերանորոգումից հետո զբոսաշրջիկների հոսքը դեպի համայնք կտրուկ կավելանա Եկեղեցու հարակից ճանապարհով է անցնում նաև Աղավնաձոր-Շատին լեռնային ճանապարհը, որն էքստրեմալ տուրիզմի համար արդեն հայտնի է : Ծրագրի արժեքը կազմում է 6.0 մլն դրամ, որից համայնքի ներդրման չափը կլինի 2.0 մլն դրամ, մնացած 4.0 մլն դրամը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից :

ԾՐԱԳԻՐ 5

ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ /ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ԵՎ ՄԱՐԶԱՂԱՇԵԻ / ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Դեռևս 1991 թվականից Աղավնաձոր գյուղն ունեցել է մարզադպրոց՝ ծածկած լողավազանով և մարզադաշտով: Մարզադպրոցում աշխատել են բարձրակարգ մասնագետներ, պարապել ըմբշամարտ, ֆուտբոլ, լող, բռնցքամարտ, թեթև ատլետիկա, բասկետբոլ և այլ մարզաձևեր: Մեր սաներից շատերը մեծ հաջողությունների են հասել հանրապետական մրցույթներում : 2000 թվականից սկսած ֆինանսական միջոցների և մասնագետների բացակայության պատճառով աստիճանաբաշ փակվեց լողավազանը, այնուհետև որոշ բաժիններ: 2007 թվականին մարզադպրոցի գործունեությունը դադարեցվեց : Մարզադպրոցի գույքը, լողավազանը և մարզադաշտը գտնվում են անմխիթար վիճակում: Ծրագրի արժեքը կազմում է մոտ 90.0 մլն ՀՀ դրամ, որից համայնքի ներդրման չափը կլինի մլն դրամ, մնացած մլն դրամը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից :

ԾՐԱԳԻՐ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ

Համայնքի ոռոգման ներքին ցանցը վերջին տարիներին չի վերանորոգվել, որի արդյունքում տեղ-տեղ խողովակներից ջրի մեծ արտոնք է տեղի ունենում, լցվելով գյուղամիջյան ճանապարհները քանդում և անհարմարություն ստեղծում: Ծրագրի արժեքը կազմում է 30 մլն դրամ, որն ակնկալվում է ստանալ միջազգային կառույցներից:


4. ՀԶԾ Ֆինանսավորումը

Համայնքի զարգացման ծրագրերի իրականացման համար մեծ ակնկալիքներ կան ՀՀ

կառավարությունից, ոչ միայն ֆինանսավորման առումով, այլև տարբեր միջազգային դոնոր կազմակերպությունների հետ շփումներ և հանդիպումներ կազմակերպելու

առումով: Ակնկալվում է նաև այնպիսի միջազգային կառույցների ծրագրերի իրականացում, որոնք այս պահին Հայաստանում չեն իրականանում:

2017-2021 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը ներկայացվում է ստորև:



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- ▨ միջազգային և դոնոր կազմակերպություններ

5. ՀԶԾ մոնիթորինգ

Նշված ծրագրերը և կատարվող աշխատանքները կարևոր համայնքի զարգացման գործում, որոնք ուղղված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

1. Յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները
2. Ծրագրի օգուտները և արդյունքները,
3. Ներգրավված բնակիչների թիվը

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: